ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-1291-24.03.2026-ՊԱ-011/0) , «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (Կ-1291[1]-24.03.2026-ՊԱ-011/0), «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին (Կ-1291[2]-24.03.2026-ՊԱ-011/0), «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (Կ-1291[3]-24.03.2026-ՊԱ-011/0), «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին (Կ-1291[4]-24.03.2026-ՊԱ-011/0) օրենքների նախագծերի փաթեթի առաջարկությունների

	Առաջարկության, փոփոխության (լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը, փոփոխությունը (լրացումը)**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը) ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը**	**Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
««Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-1291-24.03.2026-ՊԱ-011/0) օրենքի նախագիծ					
1	ՀՀ կառավարություն	Նախագծի ամբողջ տեքստում	Նախագծի ամբողջ տեքստում «վարչապետ» եզրույթը կիրառել միատեսակ մոտեցմամբ (մեծատառ կամ փոքրատառ)	Ընդունվել է	Ընդունվել է
2	ՀՀ կառավարություն	Նախագծի 11-րդ հոդված	Օրենքում նոր լրացվող 19.1 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում կիրառվում է «կազմակերպչական հաստիքային», իսկ նույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում «կազմակերպչական-	Ընդունվել է	Ընդունվել է

			հաստիքային» ձևակերպումը: Առաջարկվում է նշված դրույթներում նույն հասկացությունը կիրառել նույն կերպ:		
3	ՀՀ կառավարություն	Նախագծի 15-րդ հոդված	«ՀՀ կառավարությունը» բառերը փոխարինել «Կառավարությունը» բառով	Ընդունվել է	Ընդունվել է
4	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մաս	Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվող օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետում նոր լրացվող նախադասության համաձայն համապատասխան պետական մարմինները և **կազմակերպությունները (անհատ ձեռնարկատերերը)** պատասխանատվություն չեն կրում Ծառայությանը տրամադրված փաստաթղթերի, միջոցների գործածության արդյունքում առաջացած հետևանքների համար: Առկա է հակասություն օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ կետի 1-ին և Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ կետով նոր լրացվող 2-րդ նախադասության միջև, քանզի ծառայության աշխատակիցների կողմից օգտագործվում է պետական մարմինների և կազմակերպությունների փաստաթղթերը, միջոցները **և ոչ անհատ ձեռնարկատերերի,** ուստի	Ընդունվել է	Ընդունվել է

			վերջիններիս պատասխանատվության վերաբերյալ խնդիր ի սկզբանե չի կարող առանաջանալ: Առաջարկվում է հակասությունը վերացնել		
5	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ կետ	ՀՀ հապավումը փոխարինել «Հայաստանի Հանրապետություն» բառերով: Դիտարկումը վերաբերում է նաև Նախագծի փաթեթում առկա բոլոր հապավումներին	Ընդունվել է	Ընդունվել է
6	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ կետ	«4.1. կետերի» ձևակերպումը փոխրինել «4.1-ին կետի» ձևակերպմամբ	Ընդունվել է	Ընդունվել է
7	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Ծառայողական պարտականությունները կատարելիս ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների կամ զենքի գործադրման արդյունքում համապատասխան պարտականությունների, մասնավորապես՝ մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին օգնություն ցույց տալը և վերադասության կարգով անհապաղ զեկուցելը **նախքան դրանց կիրառումը հնարավոր չէ**: Առաջարկվում է ներքին հակասությունը վերացնելու նպատակով շարադրանքը խմբագրել:	Ընդունվել է	Ընդունվել է
8	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	13-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված է, որ ֆիզիկական ուժի,	Ընդունվել է	Ընդունվել է

			հատուկ միջոցների և զենքի կիրառման բոլոր դեպքերի մասին ծառայողը պարտավոր է անհապաղ զեկուցել իր անմիջական ղեկավարին: Նույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում ևս սահմանված է ծառայողի պարտականությունը՝ յուրքանչյուր դեպքի մասին վերադասության կարգով անհապաղ զեկուցելու վեևաբերյալ պարտականություն: Առաջարկվում է բացառել կրկնությունը:		
9	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդված	13.2 և 13.3 հոդվածների 1-ին մասերի 1-ին կետերի համաձայն՝ ծառայողն իրավունք ունի հատուկ միջոցներ և զենք կիրառել՝ **հարձակումը կամ հարձակման սպառնալիքը կանխելիս**: Առաջարկվում է, «հարձակում», «հարձակման սպառնալիք» հասկացությունների բովանդակության վերաբերյալ տարընկալումները և անորոշությունները բացառելու նպատակով, հստակ սահմանել թե որն է հարձակումը կամ հարձակման սպառնալիքը, ինչպես օրինակ նախատեսված է «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1.1 մասում:	Ընդունվել է	Ընդունվել է

10	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդված	13.2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «/» կետադրական նշանը խմբագրել	Ընդունվել է	Ընդունվել է
11	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդված	Օրենքի 19-րդ հոդվածում նոր լրացվող 5-րդ մասով սահմանվում է, որ «Ծառայության դասային աստիճանները սույն օրենքով սահմանված կարգով շնորհվում են նաև Ծառայության պետին և Ծառայության պետի տեղակալներին»: Օրենքի 19-րդ հոդվածը կրում է «Ծառայության ծառայողներին պաշտոնի նշանակելը» վերնագիրը իսկ 5-րդ մասով ներկայացված առաջարկն առաջացնում է վերնագրի և հոդվածի բովանդակության անհամապատասխանություն: Առաջարկվում է վերանայել:	Ընդունվել է	Ընդունվել է
12	ՀՀ կառավարություն	Նախագծի 15 և 24-րդ հոդվածներ	23.1-23.2, 41.1 հոդվածների համարները տեքստերից բաժանել միջակետով:	Ընդունվել է	Ընդունվել է
13	ՀՀ կառավարություն	Նախագծի 15-րդ հոդված	19-րդ հոդվածին հղումն առաջարկում ենք շտկել, քանի որ այն 6-րդ մաս չունի	Ընդունվել է	Ընդունվել է
14	ՀՀ կառավարություն	Նախագծի 22-րդ հոդված	Հոդվածի կետերի համարակալումը շտկել	Ընդունվել է	Ընդունվել է
15	ՀՀ կառավարություն	Նախագծի 24-րդ հոդված	Օրենքում նոր լրացվող 41.1 հոդվածով (սոցիալական երաշխիքների մասին)	Ընդունվել է	Ընդունվել է

			սահմանվում է, թե ովքեր են տվյալ հոդվածում նշված ընտանիքի անդամները, սակայն 41-րդ հոդվածում (**Ծառայության աշխատողների և նրանց ընտանիքների անդամների պաշտպանությունը վերտառությամբ)** նկարագրված չեն ընտանիքի անդամները: Առաջարկվում է հստակեցնել:		
16	ՀՀ կառավարություն	Նախագծի 24-րդ հոդված	Օրենքում նոր լրացվող նոր 41.1 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ծառայողներին վճարվում է միանվագ նպաստ նաև՝ «հաստիքների կրճատման, **այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման կապացությամբ Ծառայությունից ազատվելիս»:** Լուծարումը կառուցվածքային փոփոխության միայն մասնավոր դեպք է և չի տարածվի օրինակ վերակազմակերպման կամ կառուցվածքային այլ փոփոխությունների դեպքերի վրա: Առաջարկվում է կամ հիմնավորել նման տարբերակված մոտեցումը, կամ կարգավորումը տարածել համանման իրավական ռեժիմում գտնվող բոլոր ծառայողների նկատմամբ:	Ընդունվել է	Ընդունվել է
17	ՀՀ	Նախագծի 24-րդ	Օրենքի 41.1 հոդվածի 2-րդ մասի 2-րդ	Ընդունվել է	Ընդունվել է

	կառավարություն	հոդված	կետի առաջին նախադասությամբ նշվում է ընտանիքի անդամ են համարվում ծառայողի հետ **համատեղ բնակվող** 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 26 տարեկան ուսանող կամ 18 տարեկան և դրանից բարձր հաշմանդամություն ունեցող քույրը կամ եղբայրը: Իսկ նույն կետի 2-րդ նախադասությամբ նշվում է, որ «Քույրը կամ եղբայրը համարվում են ծառայողի **խնամքի տակ գտնվող**, եթե . . .»: Առաջարկվում է վերանայել և որոշակիացնել այն հասկացությունները, որոնց իրավական նշանակություն տրվել է սուբյեկտի իրավական կարգավիճակը որոշելիս:		

18	ՀՀ կառավարություն	««Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենքի 42-րդ հոդվածի 4-րդ մաս	42-րդ հոդվածի գործող 4-րդ և 5-րդ մասերում նշվում են «պետական կամ ծառայողական գաղտնիք» ձևակերպումները, սակայն միայն նույն հոդվածի 5-րդ մասում է շարադրվում «պետական գաղտնիք» և պարզ չէ, թե ինչպես է կարգավորվելու 4-րդ մասով սահմանված ծառայողական գաղտնիքին առնչվելու թույլտվության տրման գործընթացը:	Ընդունվել է	Ընդունվել է
«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (Կ-12913-24.03.2026-ՊԱ-011/0) օրենքի նախագիծ					

19	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մաս	Հղում է կատարվում «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2022թ. դեկտեմբերի 23-ի ՀՕ-604-Ն օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթ» վերտառությամբ 6-րդ հոդվածի 2-րդ մասին: Առաջարկվում է 6-րդ հոդվածի վերնագրին կատարված հղումը հանել («Եզրափակիչ մաս և անցումային դրույթ»):	Ընդունվել է	Ընդունվել է
«Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին (Կ-1291[4]-24.03.2026-ՊԱ-011/0) օրենքի նախագիծ					

20		Նախագծի 1-ին հոդված	«այսուհետ՝ Օրենք» բառերն առաջարկվում է հանել, քանի որ նախագծում «Օրենք» կրճատ ձևակերպումն այլևս չի կիրառվում: Միաժամանակ առաջարկվում է օրենքի համարում առկա վրիպակը շտկել:	Ընդունվել է	Ընդունվել է
«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին (Կ-1291[2]-24.03.2026-ՊԱ-011/0) օրենքի նախագիծ					
21	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	«N 1 հավելվածը» բառերը փոխարինել «1-ին հավելվածը» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է